

Արագածոտնի մարզը մասնակցեց «Արմպրոդէքսպո 2016» մասնագիտացված ցուցահանդեսին

21.10.2016

Արագածոտնի մարզը մասնակցեց «Արմպրոդէքսպո 2016» մասնագիտացված ցուցահանդեսին

Երեւանի մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտի «Երեւան Էքսպո» ցուցահանդեսային համալիրում հոկտեմբերի 21-ին մեկնարկեց ամենամյա «Արմպրոդէքսպո» մասնագիտացված ցուցահանդեսը, որի նպատակն է ներկայացնել Հայաստանում արտադրվող սննդի լավագույն ապրանքատեսակները եւ վերամշակող արդյունաբերության ձեռքբերումները, ինչպես նաեւ ստեղծել անմիջական գործարար կապեր հայրենական արտադրողների եւ արտասահմանյան առեւտրային կազմակերպությունների միջեւ, հայտնաբերել նոր շուկաներ, խթանել արտահանման գործընթացը:

Արագածոտնի մարզը ցուցահանդեսին ներկայացավ բավանին հագեցած ցուցադրությամբ: „Արագածոտնի մարզ,“ տաղավարում ներկայացվեցին մարզում արտադրվող գյուղատնտեսական արտադրատեսակները՝ կաթնամթերքներ, մսամթերքներ, մրգեր, բանջարեղեն, ավանդական մշակաբույսեր, ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային ըմպելիքներ, անուշեղեն, պահածոներ եւ այլ մթերքներ: Հետաքրքիր ձեւավորումներով ցուցադրված էին ազգային կերակրատեսակները, կոլորիտային երանգավորում ունեցող պատկերներ:

Եռօրյա ցուցահանդեսի առաջին օրը ցուցահանդեսի բացմանը ներկա էր մարզպետ Գաբրիել Գյոզայանը: Մարզի տաղավարի մոտ նա դիմավորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին:

Հանրապետության ղեկավարը ծանոթացավ մարզում արտադրվող գյուղատնտեսական արտադրատեսակներին եւ ոլորտում մարզի այս տարվա ձեռքբերումներին:

Ցուցահանդեսի երկրորդ օրը՝ հոկտեմբերի 23-ին, եւս բազմազան տեսականիներով էր հագեցած „Արագածոտնի մարզ,“ տաղավարը: Վարչապետ Կարեն Կարապետյանը ծանոթացավ ներկայացված գյուղատնտեսական արտադրատեսակներին, մարզպետ Գաբրիել Գյոզայանի հետ քննարկեցին կարկտահարության վնասների փոխհատուցման վերաբերյալ գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցության հարցը:

Ցուցահանդեսին մասնակցում էին հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերք վերամշակող արտադրության գրեթե բոլոր ճյուղերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ազրարային ոլորտը սպասարկող և ծառայություններ մատուցող շուրջ 90 կազմակերպություն: